

COVID-19

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն Մուտքի Ստուգում

Կարևոր թարմացումները ներառում են՝

8/6/21: Ավելացվել է հղում Բիզնեսների և Աշխատակիցների Ուղեցույցին: Վերանայվել է այն անձանց ցանկը, որոնց մուտքը արգելվում է: Վերացվել է ստուգման ձևանմուշի օրինակը:

7/30/21: Ավելացվել է հղում Cal/OSHA-ի և Կալիֆորնիայի Հանրային Առողջապահության Վարչության (CDPH) մուտքի ստուգումների պահանջներին:

Մուտքի ստուգումը COVID-19-ի տարածումը սահմանափակելուն աջակցող ռազմավարություն է: Cal/OSHA-ն պահանջում է կատարել բոլոր աշխատակիցների մուտքի ստուգում՝ նախքան աշխատանքային տարածք մուտք գործելը: Այն պահանջվում է նաև Կալիֆորնիայի Հանրային Առողջապահության Վարչության (CDPH) կողմից առողջապահական հաստատությունների բոլոր այցելուների համար ([AFL 20-38.7](#)): Չնայած որ մուտքի ստուգում չի պահանջվում ոչ առողջապահական հաստատությունների հաճախորդների կամ այցելուների համար, լավագույն գործողություն է համարվում հաստատություն մուտք գործող բոլոր անձանց ստուգումը: Այս փաստաթուղթը տրամադրում է լրացուցիչ ուղեցույց մուտքի ստուգում իրականացնող հաստատությունների համար: COVID-19-ի կանխարգելմանն ուղղված լավագույն գործողություններին խնդրում ենք տեղեկանալ [Բիզնեսների և Գործատուների Ուղեցույցի](#):

Համաձայն Cal/OSHA-ի [COVID-19 Կանխարգելման Արտակարգ Ժամանակավոր Չափանիշների](#) (ETS)՝ գործատուները պետք է մշակեն և իրականացնեն աշխատակիցների COVID-19-ի ախտանիշների ստուգման գործընթաց՝ նախքան աշխատավայր մուտք գործելը:

Մուտքի ստուգումների տարբերակները ներառում են՝

- Անձանց կողմից տանը սեփական ախտանիշների գնահատում՝ նախքան աշխատավայր ժամանելը (օրինակ՝ առցանց ստուգման համակարգի միջոցով)։
- Աշխատավայրի մուտքի մոտ ցուցանակի տեղադրում, որը կնշի, թե որ ախտանիշներ ունեցող կամ մեկուսացման/կարանտին պահպանելու հրամանի ներքո գտնվող անձինք չպետք է մուտք գործեն տարածք։
- Տեղում, անձամբ ստուգում:

Ծանոթություն: Խորհուրդ է տրվում մուտքի մոտ կատարել ջերմաչափում, սակայն դա պարտադիր չէ, եթե ստուգման գործընթացը ներառում է վերջերս ունեցած կամ տվյալ պահի ջերմություն:

Անձինք չպետք է մուտք գործեն աշխատավայր, եթե՝

- Ունեն COVID-19-ի ախտանիշներ¹։
- Ունեն մարմնի բարձր ջերմաստիճան (բարձր կամ հավասար 100.4°F կամ 38°C)։
- Տվյալ պահին գտնվում են Առողջապահության Պատասխանատուի Մեկուսացման կամ Կարանտին Պահպանելու Հրամանի ներքո:

Ծանոթություն: Առողջապահության հաստատության մուտքի պահանջները կարող են տարբերվել: Հաստատությունները պետք է հետևեն Կալիֆորնիայի Հանրային Առողջապահության Վարչության (CDPH) Բոլոր Հաստատությունների Նամակներին (AFLs):

¹ COVID-19-ի ախտանիշները ներառում են ջերմություն կամ սող, հագ, շնչարգելություն կամ դժվարացած շնչառություն, հոգնածություն, զգացողություն, մկանային կամ մարմնի ցավ, գլխացավ, կոկորդի ցավ, սրտխառնոց կամ փսխում, փորլուծություն, բքի փակվածություն կամ քթահոսություն կամ համի/հոտի նոր առաջացած կորուստ:

